



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՍԵՄՏԵՄԲԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 62

ԱՍՏՈՒԱԾ Է ՓՐԿԻԶԸ ԵՒ ԱՊԱԻԷՆԸ

Միայն Աստուծոյ հոգիս հանգիստ կը գտնէ.

անկէ կու գայ փրկութիւնս:

Միայն ան է ապաստանս եւ փրկութիւնս,

ան է իմ ապաւէնս բնաւ պիտի չսասանիմ:

Միայն Աստուծոյ ես հանգիստ կը գտնեմ, ան է որ յոյս կու տայ ինձի:

Միայն ան է ապաստանս եւ փրկութիւնս,

ան է իմ ապաւէնս, եւ ես պիտի չսասանիմ:

Աստուծոյ կախում ունին փրկութիւնս եւ փառքս.

ան է ամուր միջնաբերդս. ես Աստուծոյ կ'ապաւինիմ:

Անոր վստահեցէք միշտ, ով ժողովուրդ,

անոր դիմաց պարպեցէք ձեր սիրտը. Աստուած է մեր ապաւէնը:

Բոլոր մարդիկ շունչ մըն են պարզապէս.

ռամիկ թէ ակնուական՝ խաբկանք են, ուրիշ ոչինչ.

կշիռքի մէջ որ դրուին՝ միասնաբար ոչինչէն ալ նուազ են:

Հարստահարութեան մի՛ ապաւինիք,

յափշտակուած բաներով մի՛ հպարտանաք.

նոյնիսկ եթէ ձեր հարստութիւնը բազմապատիկ ըլլայ,

ձեր սիրտը անոր չըլլայ որ կապէք:

Աստուած ինք յայտարարեց, եւ քանիցս ես լսեցի՝

թէ զօրութիւնը Աստուծոյ կը պատկանի:

Այո՛, ո՛վ Տէր, ողորմութիւնն ալ քուկդ է,

որովհետեւ իւրաքանչիւրին կը հատուցանես իր գործերուն համաձայն:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆ ԵՎ ՄԱՐԿՈՍ

2:13-25

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ՀԱՆԴԷՊ (2:13-17)

Նախ քան սկսիլը այսօրուան հապուածի բացատրութեան, պահ մը հետեւեալ հարցումին պատասխանը փնտրենք. ի՞նչ էր ու ի՞նչ է դրդապատճառն ու նպատակը Պետրոս Առաքեալին իր այս նամակը գրելով: Յիսուս Իր յարութենէն ետք երբ հանդիպեցաւ առաքեալներուն եւ Պետրոսին, ըսաւ. «Միտն, Յովնանի որդի, կը սիրե՞ս զիս ասոնցմէ աւելի»: Պետրոս պատասխանեց. «Այո, Տէր, դուն զիպես որ կը սիրեմ»: Յիսուս ըսաւ. «Արածէ իմ գառնուկներս, ոչխարներս» (Յովի 21:15-18): Այլ խօսքով, Պետրոս Առաքեալ ունի պարտականութիւնը արածելու ու հոգեւոր սնունդ մատակարարելու Քրիստոսի հօրին: Այս նամակը ուրիշ բան չէ եթէ ոչ քրիստոնէայ հաւատարմեաց համար ուղղեցոյց անով ապրելու իր քրիստոնէական հաւատքը: Անով անելու հոգեւոր կեանքի մէջ: Քրիստոնէայ հաւատարմեացը աշխարհագրական իմաստով ցիրուցան են, պանդուխտ են եւ օտարական եւ ամէն տեսակի մարտահրաւիրներու դիմաց: Այս նամակը, հետեւաբար, ուրիշ բան չէ եթէ ոչ հոգեւոր սնունդ փառու, զինելու, պարտաստելու ամրապնդելու հաւատարմեաց քրիստոնէան Աստուծոյ խօսքին ու շնորհքին մէջ:

Այս հասկացողութեան լոյսին փակ, քրիստոնէայ հաւատարմեացը կ'ապրի այնպիսի աշխարհի մը մէջ, որ ոչ միայն պանդուխտ եւ օտարական է, այլեւ՝ աշխարհը Աստուծոյ թշնամի ու հակառակորդ է: Ուրեմն այսպիսի աշխարհի մը մէջ ի՞նչպէս կարելի է ապրիլ: Կարելի է երբ մեր վրայ կ'առնենք Աստուծոյ սպառազինութիւնը: Կարելի է երբ կ'ընթանանք Քրիստոսի հետքերով: Մանաւանդ երբ նկատուի առնենք Պետրոս Առաքեալի ժամանակահատուածը, ապա պիտի տեսնենք, որ շատ աւելի դժուարին պայմաններու փակ ապրող քրիստոնէայ հաւատարմեացը էին, որոնք կը հալածուէին, որոնց, սակայն, Պետրոս Առաքեալ կու գայ փառու հետեւեալ յորդորը հնազանդելու մարդկային բոլոր իշխանութիւններուն, Տիրոջ սիրոյն, ըլլան անոնք թագաւորներ կամ կառավարիչներ (13-14 հմբ): Բայց ինչպէս կարելի է հնազանդիլ, օրինակ՝ Ներոն կայսրին, կամ այնպիսի կառավարիչի մը, որ կը հրամայէ կոտորել քրիստոնէաները: Ահա այս իսկ է փարբերութիւնը մեր եւ Աստուծոյ գործելակերպին եւ մրաժեւակերպին: Ուրեմն, ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ապրիլ այսպիսի կացութեանց մէջ, որպէս հաւատարմեաց եւ որպէս եկեղեցի: Երբ Պօղոս Առաքեալ յարակօրէն կը ներկայացնէ որ մենք պատերազմ ունինք պատերազմելիք, եւ այդ պատերազմին համար յարուկ սպառազինութիւն պէտք է, որ փրուած է Գլխաւոր Հրամանաւարին կողմէ, այսինքն՝ Աստուծոյ կողմէ յարուկ եկեղեցիին: Յաճախ այդ սպառազինութիւնը մեկդի կը դնենք օգտագործելու համար ուրիշ սպառազինութիւն: Պօղոս Առաքեալ կը յիշեցնէ. «Ճիշդ է որ աշխարհի մէջ կ'ապրինք, բայց աշխարհային նկատումներէ առաջնորդուած չէ որ կը պատերազմինք: Պատերազմի մեր զենքերը աշխարհային չեն, այլ՝ Աստուծոյ զօրաւոր զենքերն են՝ անրոցներ խորտակելու համար» (Բ Կորնթ 10:3-4): Ուրեմն ընել այն ինչ որ թելադրուած է ընել, օգտագործել այն զենքերը որ փրուած են Հրամանաւարին կողմէ: Տակաւին, Պօղոս Առաքեալ այդ զենքերն ալ կը նշէ թէ ինչ են. «Հաւատքի վահան, փրկութեան սաղաւարտ, Սուրբ Հոգիին սուրբ, այսինքն՝ Աստուծոյ խօսքը: Այս բոլորին հետ՝ աղօթեցէք Սուրբ Հոգիի օգնութեամբ» (Եփես 6:16-18): Հիմա հարցում, այս զենքերը կը գործածենք: Աղօթքին դերը եւ փեղը մեր ամենօրեայ կեանքին մէջ: Աստուծոյ խօսքին քարոզութիւնը մեր ամենօրեայ կեանքին մէջ: Ուրեմն, երբոր այս զենքերը զինաթափ կ'ըլլան, ուրիշ զենքեր կը փորձեն օգտագործել երբ նեղութեան եւ դժուարութեան մէջ ենք: Յիշենք, Դաւիթի եւ Գողիաթի պատմութիւնը: Ուրեմն, կը հաւատարմեաց, որ Աստուծոյ փրուած սպառազինութեամբ կրնանք յաղթել «Գողիաթին», ու այն բոլոր դժուարութիւններուն որոնք ամենօրեայ մարտահրաւիրներ են իւրաքանչիւրիս: Սա չի նշանակել, որ պէտք է ուրեմն հեռանալ ու մեկուսանալ ընկերութենէն: Ոչ: Այլ մեր անբողջական վարտիւթիւնը դնելու Աստուծոյ վրայ եւ Անոր կամքին համաձայն ապրելու եւ գործելու: Ասոր լաւագոյն օրինակը Քրիստոս Ինք փրուաւ Իր երկրաւոր կեանքով առանց հակառակելու մարդկային իշխանութիւններուն եւ կամ կառավարիչին: Նոյն արտայայտութիւնը ունի Պօղոս Առաքեալ Հռոմայեցիներուն նամակին մէջ 13:1-7: Այս բոլորը Աստուծոյ սիրոյն համար (Մ Պետր 2:13), եւ ոչ թէ մարդոց:

Չմոռնանք նաեւ որ կան պարագաներ, ուր չեն համապատասխաներ մեր քրիստոնէական սկզբունքներուն: Օրինակ, Դանիէլի երեք ընկերները, որոնք մերժեցին Նաբուգոդոնոսորին երկրպագելու անոր կանգնեցուցած արձանին: Կամ Պետրոս Առաքեալին պիտի արգիլուէր քարոզելու Յիսուսի անու-

նով, որուն, սակայն, Պետրոս Առաքեալ պիտի պատասխանէր ըսելով. «Մենք չենք կրնար չխօսիլ մեր քրեասածին ու լսածին մասին» (Գործք 4:19-20):

Պետրոս Առաքեալ նաեւ կը զգուշացնէ, ըսելով, թէւ ազատ ենք, բայց այդ ազատութիւնը չօգտագործենք չարիք գործելու համար (16 հմբ): Այնպէս մը ապրեցէք, հետեւաբար, ոչ թէ որովհետեւ թագաւոր կայ, կաավարիչ կայ, նախագահ կայ կամ ղեկավար, այլ՝ Աստուած: Անոր համար ալ քրիստոնէայ հաւատացեալը փարբեր պէտք է ըլլայ: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Ինչ որ կ'ընէք այնպէս ըրէք, որպէս թէ Աստուծոյ» (Եփես 6:7, Կողոս 3:23): Հաւատացեալը ի՞նչ ցոյց պիտի փայ. յարգանք, սէր, պատուել բոլորի նկատմամբ, եւ Աստուծոյ երկիւղը ունենալ: Ըլլալու պարկեշտ եւ օրինակելի քաղաքացիներ: Քաղաքացիներ, որոնք ամենայն բժախնդրութեամբ յանձն առած են պարտականութիւնը մասնկացելու, աղօթելու: Այլ խօսքով, ըլլալու աղ եւ լոյս մեր շրջապատին:

ՔՐԻՍՏՈՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ ՄԵՉԻ ՕՐԻՆԱԿ (2:18-25)

Այս բոլոր բացատրութիւններուն գործնական օրինակը Պետրոս Առաքեալ ցոյց կու փայ Յիսուս Քրիստոսի անձով: Մանաւանդ, երբ հնազանդութիւն պիտի ցուցաբերենք անոնց, որոնք անգույթ են: Երեսոյթ մը, որ երբեք ալ չենք համոզուած անոր: Ինչպէս կարելի է հնազանդիլ անգույթ փերերու: Բայց Քրիստոս պիտի ըսէ. «Միրեցէք ձեր թշնամիները»: Որովհետեւ արիկա ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ մէկ շնորհքը, երբ կը համբերենք անիրաւ փեղ կրած նեղութիւններուն: Այլապէս որպէս մարդ անհնար է այդ բոլորին համբերել: Միւս կողմէ, ի՞նչ է արժէքը երբ մեր գործած յանցանքերուն համար կը փանջուիք եւ փորձենք համբերել:

Ահա այս համբերութիւնը ցուցաբերելու կոչուած ենք կ'ըսէ Պետրոս Առաքեալ, որուն օրինակը Քրիստոս Ինք փուս մեզի: Քրիստոս ըլլալով օրինակը հնազանդութեան, ու Անոր հետքերով ընթանալու: Ան մեր մեղքերը կրեց: Ան է մեր ճշմարիտ Հովիւր: Այս բոլորին դիմաց Ինքզինք յանձնեց Արդար Դատաւորին: Այս բոլոր պատկերացումներուն նախապատկերը փուս Եսայի մարգարէն 53:5-6, որ «անոր վերքերովն էր որ բժշկուեցանք», որպէսզի մեղքի փիրապետութենէն ազատա՞ծ արդարութեան համար ապրինք: Այս բոլորը ըրաւ մեր մեղաւորութեան համար: Մեր ճշմարիտ Հովիւն է, որովհետեւ մենք բոլորս որպէս ոչխարներ մոլորած էինք, եւ Ինք իջաւ ու մեզ գրաւ: Ինչպէս պիտի ըսէ Դաւիթ. «Տէրն է իմ Հովիւս» (Սաղմ 23):

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*